

R.V. SARGSYAN

**THE PRO-ARMENIAN POLICY IMPLEMENTED BY THE FRENCH
REPUBLIC AT THE STATE LEVEL FROM THE 1990S TO THE
PRESENT DAY**

The article discusses the steps taken by the French Republic at the state level from the 1990s until now, the developments of diplomatic relations and the initiatives adopted in a pro-Armenian orientation. Thanks to this, the Armenian-French friendship is deepening, which has its direct impact on the Armenian community in France, naturally only in a positive way.

Keywords: Patrick Labonne, Charles Aznavour, Armenian Diocese of France, Armenians of France.

ՀՏԴ 303.1: 371.217 (479.25)

Ս.Գ. ՄԱՆԹԱՇՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՔՈԼԵՋՆԵՐՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՍՆՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ**

Դիտարկվում է ՀՀ դպրոցներում և քոլեջներում սովորողների շրջանում սննդի վերաբերյալ հեղինակի անմիջական մասնակցությամբ անցկացված սոցիոլոգիական հետազոտության փորձը:

Առանցքային բառեր. սննդակարգի՝ մշակույթ, փորձառություն, պրակտիկաներ և նախասիրություններ, կայուն դպրոցական սնունդ, CATI ծրագիր, SPSS ծրագիր:

«Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրում Երևան քաղաքի դպրոցներն ընդգրկելուն, այսինքն՝ Երևան քաղաքի դպրոցահասակ երեխաների՝ դպրոցում կայուն սնունդ ապահովելուն ուղղված բաղադրիչի **նպատակն է հանրակրթական հաստատություններում աշակերտներին ապահովել հավասարակշռված, անվրանգ և բարձրորակ տաք սննդով, բարելավել երեխաների առողջությունը, ցուցաբերել աջակցություն սոցիալապես անապահով բնակչությանը, ուստիև՝ բարձրացնել երեխաների ընդգրկվածության աստիճանը դպրոցում կրթության գործընթացին՝ բարելավելով կրթության որակը:**

Տեղեկատվության բացակայության պատճառով «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի պատվերով իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել տարրական և միջին դասարաններում սովորող աշակերտների՝ դպրոցում սնվելու առկա փորձառությունը, պրակտիկաները և նախասիրությունները, այդ թվում՝ դպրոցական սննդի վրա ծախսվող բյուջեի չափը: Բացի այդ, հետազոտությունը բացահայտում է շահառուների վերաբերմունքն ու պատկերացումները դպրոցում՝ երեխաներին որակյալ և տաք սննդով ապահովելուն ծառայող կենտրոնացված սննդի մատակարարման համակարգի ներդրման, ինչպես նաև ծնողների՝ դրանում մասնակցություն ունենալու և աջակցություն ցուցաբերելու պատրաստակամության վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ դպրոցահասակ երեխաների սնվելու պրակտիկաներն ու սովորությունները ձևավորվում և վերարտադրվում են ծնողների անմիջական ազդեցությամբ և մեծ մասամբ՝ նրանց մասնակցությամբ: Դպրոցում սնվելու գործընթացին մասնակցություն են ունենում նաև դասվարներն ու դասղեկները, որոնք ականատես են լինում երեխաների՝ դպրոցում սնվելու գործընթացին, տարրական դասարանների դեպքում նաև՝ կառավարում և համակարգում են այդ գործընթացը, ինչպես նաև, բուֆետներ և ճաշարաններ ունեցող դպրոցներում այս գործընթացին ամբողջությամբ կամ մասամբ մասնակցություն են ունենում նաև բուֆետի կամ ճաշարանի աշխատակիցները: Այս ամենը պայմանավորել է հետազոտության օբյեկտի ընտրությունը:

«Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի շահառուների ուսումնասիրությունն իրականացվել է Երևանյան դպրոցներում ներկայացված շահառուների (սովորողների և նրանց խնամակալների) և շահագրգիռ այլ կողմերի, մասնավորապես՝ դպրոցի ներկայացուցիչների շրջանում: Հարցվողների ընտրությունն իրականացվել է եռաստիճան շերտավորված ընտրանքի մեթոդաբանությամբ [1]:

Ծրագրի շահառուների հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է մեկնարկային հաշվետվությամբ շարադրված խնդիրների և հարցադրումների շրջանակը [2,3]: Հետազոտության հիմնական հասկացություններից են. տարրական և միջին դասարաններում սովորող աշակերտների՝ դպրոցում սնվելու առկա **փորձառությունը, պրակտիկաները և նախասիրությունները, այդ թվում՝ դպրոցական սննդի վրա ծախսվող բյուջեի չափը**, դպրոցում երեխաներին որակյալ և տաք սննդով ապահովելուն ծառայող կենտրոնացված **սննդի մատակարարման համակարգը**, ծնողների, աշակերտների, դպրոցում աշխատող անձնակազմի (ուսուցիչներ և բուֆետի աշխատողներ) **մասնակցությունը, առողջ սնունդ հասկացությունը**:

Հետազոտող խումբը բախվել է մի շարք սահմանափակումների և խոչընդոտների, մասնավորապես՝ սկզբնական փուլում սոցիոլոգիական հետազո-

տության ծրագիրը [1] ճշգրտելիս պարզվեց, որ տեղական դաշտում բացակայում է նման սոցիոլոգիական հետազոտության փորձը: Համացանցում առկա էր միայն ռուսաստանյան, բելառուսական, ուկրաինական փորձը [4]: Փաստորեն, այս հետազոտությունն իր բնույթով կարելի է դասել, այսպես կոչված, հետախուզական սոցիոլոգիական հետազոտությունների շարքը՝ այդտեղից բխող բոլոր թերի արդյունքների և չստացված ակնկալիքների հետ միասին:

Քանակական հետազոտության [1] հարցաթերթիկը, ինչպես նաև որակական հետազոտության [5] հարցաշարերը որոշակի սխալներ, անճշտություններ էին պարունակում, որոնք պատվիրատուի հետ երկարատև աշխատանքի ընթացքում ճշգրտվել և լավարկվել են: Հարցաթերթիկը և հարցաշարերը փորձարկվել են մինչև հետազոտությունը սկսելը և նորից ճշգրտվել:

Գլխավոր խոչընդոտներից էր պատվիրատուի կողմից տրամադրված հեռախոսահամարների ցուցակի մեջ զգալի քանակի ոչ ճշգրիտ տեղեկատվությունը: CATI ծրագրով կատարվող զանգերի ժամանակ որոշ ծնողներ հրաժարվեցին պատասխանել հարցերին, շեշտելով, որ «իրենց հետ չեն պայմանավորվել»: Այս հանգամանքով պայմանավորված՝ հետազոտության ժամանակը երկարեց 6 ամսով, ինչն էլ բերեց գրուցավարների փոփոխման, արդյունքում գրուցավարների հետ նախնական պլանավորված և անցկացված դասընթացների (training) քանակը եռապատկվեց:

Հարցաթերթը բավականին ծավալուն էր և շատ հաճախ հարցվողները կամ չէին համաձայնում այդքան երկար ժամանակ տրամադրել՝ հարցերին պատասխանելու համար, կամ էլ հարցաթերթի կեսից հրաժարվում էին: Սա է պատճառը հարցման մասնակիցներից հրաժարվածների, ընդհատածների մեծ թվի: Դժգոհությունները պայմանավորվում էին նաև հարցաթերթի համար գրուցավարի կողմից նախապես հնչեցրած 15-20 րոպեի 30-35 րոպեով ավարտելու հանգամանքով, ինչի արդյունքում հետագայում գրուցավարները, որպես միջին տևողություն հարցվողների համար նախապես հաստատված 20 րոպեի փոխարեն, պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո նշեցին 30 րոպե, ինչը CATI ծրագրով չի ենթադրվում:

Հետազոտության քանակական հարցմանը մասնակցել է 2249 շահառու ծնողներ/խնամակալներ, որոնցից ստացվել է 1200 կատարված հարցում, իսկ որակական հարցմանը մասնակցել է 54 աշակերտ, դասվար, դասղեկ, բուժետի կամ ճաշարանի աշխատակից, որոնցից ստացվել է 36 կատարված հարցում:

Շահառուներ են հանդիսացել. **տարրական և միջին դասարաններում սովորողները**, որոնց թիվը 2022 մայիսին [4] կազմում էր համապատասխանաբար 46,964 և 55,660, և ովքեր սովորում էին **153 դպրոցներում**; սովորողների

ծնողները և/կամ խնամակալները; դպրոցական **աշխատակազմի ներկայացուցիչ հանդիսացող** տարրական դասարանների դասավարները, որոնք մեծ ներգրավվածություն ունեն երեխաների դպրոցական առօրյայում և դպրոցական կյանքի, այդ թվում և՛ սննդի կազմակերպման գործընթացներում, ինչպես նաև **բուժետի կամ ճաշարանի աշխատակիցներն** այն դպրոցներում, որտեղ առկա է բուժետ:

Հաշվի առնելով տարրական դասարանների սովորողների ինքնուրույնության դեռևս ցածր մակարդակը (պայմանավորված տարիքային և ազգային առանձնահատկություններով), ինչի արդյունքում նրանց դպրոցական վարքագիծն ու գործողությունները մեծ մասամբ որոշվում (պայմանավորված թելադրվում), սահմանվում են ծնողների և/կամ խնամակալների կողմից, այս աշակերտների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում հավաքվել է սովորողների ծնողների և դպրոցի աշխատակազմի ներկայացուցիչների միջոցով: Միևնույն ժամանակ, տարրական դասարանների սովորողների կարծիքը ստանալու համար (ձայնը լսելի դարձնելու նպատակով) վերջիններիս հետ անցկացվել են խորին դիալոգիկ հարցազրույցներ:

Դիալոգիկ [1] հարցազրույցներ են անցկացվել միջին դասարաններում սովորող աշակերտների շրջանում՝ ստանալով վերջին օրերի ընթացքում դպրոցում սպառած սննդատեսակների, սպառման վայրի, ժամի ու ձևի մասին տեղեկություններ: Երեխաների հետ հարցազրույցներն իրականացվել են նրանց ծնողների կամ խնամակալների համաձայնության պարագայում: Տվյալների հավաքման էթիկական նկատառումների սկզբունք է հանդիսացել ՅՈՒՆԻՍԵՖ-ի [4] կողմից մշակված էթիկայի ուղեցույցը: Մեկնարկային հաշվետվությամբ ներկայացված ընտրված դպրոցների և դրանցում ընտրված դասարանների և աշակերտների ցանկը (ըստ մատյանում աշակերտի համարի) տրամադրվել է «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից, Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվությամբ՝ առ այն, որ նրանք համաձայն են մասնակցելու հարցմանը:

«Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի հավանական շահառուների հետազոտության նպատակները բացահայտելու համար ծրագրի շահառուների հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ստորև շարադրված խնդիրների և հարցադրումների շարքը. 1. տարրական և միջին դասարանների աշակերտների սննդի կազմակերպման ներկա պրակտիկաները, 2. տարրական և միջին դասարաններում սովորող երեխաների ծնողների մասնակցությունը դպրոցական սննդի կազմակերպման գործընթացին, 3. դպրոցական անձնակազմի ներկայացուցիչների /դասուցիներ, դասավարներ, ուսմասվարներ, ճաշարանի

աշխատակիցներ/ մասնակցության աստիճանը տարրական և միջին դասարաններում սովորող աշակերտների՝ դպրոցում սնվելու գործընթացին, 4. ծնողների և դպրոցների աշխատակազմի ներկայացուցիչների՝ դպրոցական սննդի անվտանգության, որակի և առողջ լինելու վերաբերյալ հարցերի ընկալումը և կարևորումը, 5. շահագրգիռ խմբերի դիրքորոշումը դպրոցներում՝ երեխաներին առողջ, որակյալ և տաք սնունդ մատակարարելու և դրանից օգտվելու պատրաստակամության վերաբերյալ, 6. շահագրգիռ կողմերի կարծիքը անհրաժեշտ առողջ սննդակարգի վերաբերյալ երեխաներին և ծնողներին գիտելիք և տեղեկատվություն տրամադրելու ձևաչափի մասին, 7. երեխայի ընտանիքի ընդհանուր բնութագիրը, ներառյալ՝ ընտանիքի անդամների թիվը, ընտանիքում երեխաների թիվը, ամսական եկամուտների չափը և այլն:

Տարրական և միջին դասարանների աշակերտների սննդի կազմակերպման ներկա պրակտիկաները պարզելու համար առաջ են քաշվել, մասնավորապես, հետևյալ հարցադրումները. Քանի՞ ժամ են երեխաներն անցկացնում դպրոցում, Արդյո՞ք երեխաները դպրոցում սնվում են, Արդյո՞ք դպրոցում սնվելը կրում է կանոնավոր բնույթ, Ինչպիսի՞ն է դպրոցում սնվելու պարբերականությունը, Ի՞նչ սնունդ են երեխաներն ընդունում դպրոցում և ի՞նչ քանակով/չափաբաժնով, Ինչպե՞ս է փոխվում երեխայի դպրոցական սննդակարգը՝ կախված սեզոնայնությունից, Ի՞նչ եղանակով են աշակերտներն ապահովվում դպրոցական սնունդը (դպրոցի բուֆետից են գնում, դպրոցի մոտակա տարածքում տեղակայված խանութներից/սննդի կետերից, տանից են բերում և այլն), Որտե՞ղ են աշակերտները սնվում՝ բուֆետում, դասարանում, դպրոցից դուրս, Ե՞րբ և ո՞ր ժամին են սնվում (դասամիջոցին, դասերի վերջում, առավոտյան՝ նախքան առաջին դասաժամի մեկնարկը), Աշակերտներն արդյո՞ք նախաճաշում են տանը, Որքա՞ն գումար է օրական/ամսական հատկացվում մեկ երեխային՝ դպրոցական սննդով ապահովելու համար (եթե ունեն մեկից ավելի երեխա, ապա ներկայացնել՝ ըստ տարիքային խմբերի), Դասերից հետո արդյո՞ք երեխաները սովի զգացողություն ունենում են, Արդյո՞ք նրանք տուն հասնելիս սնվում են, Երեխաները լվանո՞ւմ են արդյոք ձեռքերը դպրոցում սնունդ ընդունելուց առաջ:

Տարրական և միջին դասարաններում սովորող երեխաների ծնողների մասնակցությունը դպրոցական սննդի կազմակերպման գործընթացին պարզելու համար արվել են հետևյալ հարցադրումները. Ի՞նչ գործոններով են առաջնորդվում ծնողները երեխայի՝ դպրոցում սնվելու կամ չսնվելու հարցում որոշում կայացնելու ժամանակ (օրինակ՝ նախընտրում են, որ երեխան դպրոցում չսնվի, քանի որ դպրոցն ապահովված չէ անհրաժեշտ հիգիենիկ պայմաններով), Ինչպե՞ս են ծնողները սահմանում երեխայի դպրոցական ռացիոնը, Ի՞նչ սննդատե-

սակներ է ներառում երեխաների դպրոցական օրապարենը, Արդյո՞ք ծնողները նախընտրում և կիրառում են տանը պատրաստված սննդի սպառումը, թե դպրոցի բուֆետից կամ այլ սննդի կետից/խանութից գնվածը, Ինչպե՞ս են ծնողները հետևում և վերահսկում երեխայի՝ դպրոցում սնվելու գործընթացը:

Դպրոցական անձնակազմի ներկայացուցիչների /դասղեկներ, դասավարներ, ուսմասվարներ, ճաշարանի աշխատակիցներ/ մասնակցության աստիճանը տարրական և միջին դասարաններում սովորող աշակերտների՝ դպրոցում սնվելու գործընթացին պարզելու համար առաջ են քաշվել հետևյալ հարցադրումները. Արդյո՞ք ուղղորդում են երեխաներին կամ ծնողներին սննդի ընտրության և սպառման հարցում, Արդյո՞ք հետևում են, որպեսզի երեխաները սնվեն դպրոցում, Կրթության բովանդակության շրջանակներում Ի՞նչ անդրադարձ ունեն առողջ սննդակարգի, անվտանգ սննդի և սնվելու վարքականոնների վերաբերյալ:

Ծնողների և դպրոցների աշխատակազմի ներկայացուցիչների ընկալումը և դպրոցական սննդի անվտանգության, որակի և առողջ լինելու մասին հարցերի կարևորումը պարզելու համար առաջ ենք քաշել հետևյալ հարցադրումները. Ինչպիսի՞ն են երեխաների՝ նախաճաշելու սովորությունները (պարբերականությունը, ժամերը, սննդի ցանկը), Ինչպե՞ս են ծնողներն ու աշխատակազմի ներկայացուցիչներն ընկալում «առողջարար սնունդ» հասկացությունը, Որո՞նք են երեխաների կողմից սննդի տարբեր կատեգորիաների փաստացի սպառման ներկայիս սովորությունները, Որքանո՞վ են ծնողներն իրազեկված և հետևում դպրոցում ճաշարանների սանիտարահիգիենիկ պայմաններին, Ծնողների և դպրոցական աշխատակազմի ներկայացուցիչների ընկալմամբ ո՞ր պայմանների բավարարման դեպքում սնունդը կարող է որակվել որպես «անվտանգ», Ինչպե՞ս է ընկալվում «որակյալ սնունդը» ծնողների և դպրոցական անձնակազմի ներկայացուցիչների շրջանում: Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ, որպեսզի սնունդը համարվի «որակյալ», Որքանո՞վ են ծնողները և դպրոցական աշխատակազմի ներկայացուցիչները կարևորում սննդի անվտանգությունը, որակը և առողջ լինելը:

Շահագրգիռ խմբերի դիրքորոշումը դպրոցներում՝ երեխաներին առողջ, որակյալ և տաք սնունդ մատակարարելու և դրանից օգտվելու պատրաստակամությունը պարզելու համար առաջ են քաշվել հետևյալ հարցադրումները. Ինչպե՞ս են ծնողներն ու դպրոցական անձնակազմի ներկայացուցիչները ընկալում դպրոցական սննդի կենտրոնացված համակարգը, Ի՞նչ գիտելիքներ և դիրքորոշումներ ունեն դպրոցական սննդի կենտրոնացված համակարգի վերաբերյալ (օրինակ՝ սննդի կազմակերպումն իրականացվի դպրոցի կողմից՝ կառավարության համապատասխան ծրագրով), Որքանո՞վ են ծնողները պատրաստ՝ վստահելու դպրոցում երեխաներին մատուցվող առողջ, որակյալ և տաք սննդին, Ի՞նչ

նախապայմաններ են անհրաժեշտ երեխաներին մատակարարվող դպրոցական սննդին լիովին վստահելու և դրանից՝ երեխայի օգտվելը խրախուսելու համար, Ո՞ր դեպքերում ծնողները դպրոցական առողջ, որակյալ և տաք սնունդ մատուցելու աշխատանքներին աջակցելու պատրաստակամություն կունենան, այլ կերպ ասած՝ կամավորական սկզբունքով կներգրավվեն երեխաներին դպրոցական սնունդ մատակարարելու գործընթացին, Ներգրավվածության ի՞նչ եղանակներ և ձևաչափեր կառաջարկեն, Ծնողները որքա՞ն գումար են պատրաստ ներդնել կամ վճարել դպրոցում երեխայի տաք սնունդն ապահովելու համար, Համաֆինանսավորման ի՞նչ տարբերակներ կարող են առաջարկել ծնողները:

Այսպիսով, տարրական և միջին դասարաններում սովորող աշակերտների՝ դպրոցում սնվելու առկա փորձառության, պրակտիկաների և նախասիրությունների ուսումնասիրման ընթացքում ստացվեցին ուշագրավ և, ինչու չէ, ակնկալվող արդյունքներ: Պարզվեց, որ դպրոցականների սննդակարգի մշակույթը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մեծերի, ինչպես ծնողների, այնպես էլ դպրոցական անձնակազմի, և սննդամթերքի շուկայում առկա գովազդային ագրեսիվ արտադրանքի ազդեցությամբ: Մեծերի պատկերացումները առողջ սննդի վերաբերյալ չեն համապատասխանում հասարակության ակնկալիքներին: Դպրոցականները արդեն փոքր տարիքից սնվում են անառողջ սննդակարգով, հիմնականում էժան, և հասանելի հացաբովկեղենով: Բացի այդ, դպրոցական սննդի վրա ծախսվող ընտանեկան բյուջեի չափը ևս պայմանավորում է սննդակարգը: Ինչ վերաբերում է շահառուների վերաբերմունքին ու պատկերացումներին դպրոցում՝ երեխաներին որակյալ և տաք սննդով ապահովելուն ծառայող կենտրոնացված սննդի մատակարարման համակարգի ներդրմանը, ապա ծնողների մեծ մասը համաձայն է այդ մտքին (հարցվողների մի մասը նշում էր սեփական դպրոցական տարիներից ճաշարանից օգտվելու փորձը): Ծնողների որոշ հատված պատրաստակամ է այդ համակարգում ֆինանսապես մասնակցություն ունենալ և աջակցություն ցուցաբերել: Նկատեցինք, որ դպրոցական առարկաների շրջանակներում գրեթե բացակայում են առողջ սննդի վերաբերյալ թեմաները:

Ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտության հարցաթերթիկները տեղայնացվել են քոլեջում սովորողների, նրանց ծնողների, դասախոսների շրջանում բանավոր հարցազրույց անցկացնելու համար: Ստացված պատկերը գրեթե ոչնչով չի տարբերվում վերևում նշված արդյունքներից: Ավելին, քոլեջներում գրեթե բացակայում է սնվելու վայրը: Եվ ուսանողները գալիս են դպրոցից արդեն պատրաստի բացասական սխալ վարքագծով:

Հավելենք, որ քանակական հարցազրույցների անճշտությունների թվային ցուցանիշները վկայում են հայկական հասարակության, այսպես կոչված,

սոցիոլոգիական ոչ բավարար մակարդակում գտնվելու մասին: Կարելի է եզրակացնել, որ ստացած տեղեկատվությունը, մշակված SPSS ծրագրի միջոցով, պետք է դիտարկվի միայն որպես հետախուզական հետազոտության արդյունք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Կյուրեղյան Է.Ա.** Կիրառական սոցիոլոգիա: Դասագիրք.- Եր.: Ճարտարագետ, 2015. -468 էջ:
2. Основы применения SPSS в социологии: Учеб.пособие/Сост. А.К. Леонов.-Благовещенск: Амурский гос. ун-т, 2016.-167с.
3. **Криштановская А.О.** Анализ социологических данных.-М.: ГУВШЭ, 2006. -285с.
4. <https://reports.emis.am/schools-manual-reports>
5. Типы и предмет качественных опросов. <https://ru.surveymonkey.com>

Տ.Գ. ՄԱՆՏԱՇՅԱՆ

ИЗ ОПЫТА СОЦИОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ ОТНОСИТЕЛЬНО ПИТАНИЯ В СРЕДЕ УЧАЩИХСЯ ШКОЛ И КОЛЛЕДЖЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Рассматриваются вопросы, относящиеся к опыту социологического исследования о питании, которое было проведено при непосредственном участии автора.

Ключевые слова: культура питания, опыт, практика и предпочтения, стабильное школьное питание, программа CATI, программа SPSS.

S.G. MANTASHYAN

FROM THE EXPERIENCE OF SOCIOLOGICAL RESEARCH ON NUTRITION AMONG SCHOOLS PUPILS AND COLLEGES STUDENTS OF REPUBLIC ARMENIA

The article discusses issues related to the experience of sociological research on nutrition, which was conducted with the direct participation of the author.

Keywords: nutrition culture, experience, practices, stable school meals, CATI program, SPSS program.